ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Գևորգյան

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128
էլ. հասցե՝ garnikagevorgyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 14.01.2022, գրախոսվել է 14.02.2022,
ընդունվել է տպագրության 07.03.2022
DOI:10.53548/0320-8117-2022.1-65
ՀՏԴ: 330.11

Ներածություն

«Տնտեսական ինքնիշխանություն» հասկացությունը պարզաբանում է, թե երկրի իշխանությունները որքանով վճռորոշ ձայն ունեն ազգային տնտեսության ճակատագրին, նրա զարգացման հիմնական առաջնահերթություններին վերաբերող հարցերին առնչվող որոշումներ կայացնելու գործում, և որչափով են այդ որոշումները կրում այլ երկրների կամ միջազգային խոշոր կազմակերպությունների ազդեցությունը:

Տնտեսական ինքնիշխանությունը գործնականում չի կարող բացարձակ բնույթ ունենալ: Խնդիրը տնտեսական ինքնիշխանության արդյունավետ մակարդակի գնահատումն ու դրա պահպանմանն ուղղված համապատասխան պայմանների ապահովումն է:

Տնտեսական ինքնիշխանությունը ինտեգրալ հասկացություն է, որը ներառում է ինչպես զուտ տնտեսական, այնպես էլ ներքին ու արտաքին քաղաքական, նաև աշխարհաքաղաքական բաղադրիչներ: Պետության տնտեսական ինքնիշխանության ընդունելի և արդյունավետ մակարդակի ապահովումը որոշումների կայացման գործընթաց է, որում երկրի իշխանությունները, իսկ ավելի լայն իմաստով՝ վերնախավերը կայացնում են քաղաքական որոշումներ՝ հիմնվելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական իրողությունների վրա: Աշխարհի շատ երկրներ, հատկապես ազդեցիկ ու հզոր պետությունները, տնտեսական գործիքներն օգտագործում են սեփական աշխարհաքաղաքական նպատակներով՝ այդ գործընթացում զգալիորեն թուլացնելով համեմատաբար խոցելի երկրների տնտեսական ինքնիշխանությունը: Հայաստանը դասվում է հենց այդպիսի պե-

տությունների շարքին, որովհետև, մի կողմից, գտնվում է չափազանց բարդ և աշխարհաքաղաքական տեսանկյունից զգայուն տարածաշրջանում, մյուս կողմից՝ չունի բավարար չափով կայացած ինստիտուտներ ու տնտեսական հզորություններ՝ ամենատարբեր նպատակներով տնտեսական ինքնիշխանությանն ուղղված մարտահրավերներին դիմակայելու համար:

Տնտեսական ինքնիշխանության խնդիրն առնչվում է մարդու հիմնարար ազատությունների, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական ազատությունների հետ: Քաղաքական իշխանության համար միշտ կարող է գայթակղիչ լինել հանուն տնտեսական ինքնիշխանության ապահովման՝ երկրի ներսում տնտեսական ու քաղաքական ազատությունների սահմանափակման հնարավորությունը:

Տնտեսական ինքնիշխանության պատմաքաղաքական նախադրյալները: Վեստֆալից մինչև ԵՄ

«Ինքնիշխանություն» հասկացությունն առաջին անգամ XVI դարում ներկայացրել է ֆրանսիացի մտածող Ժան Բոդենը: Նրան է պատկանում պետության հայտնի սահմանումներից մեկը. «Պետությունը բազմաթիվ ընտանիքների և նրանց ունեցվածքի՝ իրավունքի վրա հիմնված կառավարումն է ինքնիշխան իշխանությունների կողմից»[1]: «Ինքնիշխանությունը պետության մշտական ու բացարձակ իշխանությունն է»,- գրում է Բոդենը: «Ինքնիշխանություն» երևույթի մեկնաբանության հարցում զգալի ներդրում ունի նաև Թոմաս Հոբսը: «Ինքնիշխանություն՝ նշանակում է վերջնական իշխանություն»[2]:

«Պետություն» հասկացության տարածված բացատրություններից մեկի համաձայն՝ այն ինստիտուտների ամբողջություն է, որում կենտրոնացված է քաղաքական իշխանությունը, և որը, միևնույն ժամանակ, անկախ է ինչպես տիրակալից, այնպես էլ հպատակներից[3]: Դա նշանակում է, որ խոսքը վերաբերում է որոշակի տարածքում բնակվող քաղաքացիների նկատմամբ լեգիտիմ ուժի մենաշնորհին: Պետությունն այն միակ հաստատությունն է, որն ունի լեգիտիմ ուժի կիրառման «վերջերյան» իրավունք[4]: Այս սահմանումից բխում է երկու կարևոր հարց՝ ինչպե՞ս է ձևա-

[1] https://iep.utm.edu/bodin/

[2] HTTPS://IEP.UTM.EDU/HOBMETH/

[3] Theories of the state/Andrew Vincent 1987, 51-53.

[4] Smith, Solinger, Topik 2002, 158-171.

վորվում ուժի այդ մենաշնորհի իրավունքը, և ո՞րն է դրա նպատակը: Առաջին հարցը ինքնիշխանության տեսության հարթությունում է, մինչդեռ երկրորդը վերաբերում է սեփականության տեսությանը: Ինքնիշխանության առումով պետությունը հաճախ ընկալվում է որպես այդպիսին «վեստֆալյան»[5] իմաստով՝ «ներքնապես և արտաքնապես»: Պետության արտաքին և ներքին ինքնիշխանությունը նշանակում է, որ այն իր սահմանների շրջանակում առաջացած վեճերի լուծման միակ, եզակի դատավորն է՝ արբիտրը: Հետևաբար, կարևոր է պարզել նաև լեգիտիմ հաշտարարության իրավունքի սկզբնաղբյուրը: Իսկ դա փաստացի բխում է սոցիալական պայմանագրից, որով քաղաքացիները հաշտարարության լիազորությունը պատվիրակում են կառավարությանը, որն էլ իր հերթին իրավունք է տալիս վերջինիս՝ լուծելու քաղաքացիների միջև առաջացած վեճերը՝ կանխարգելելով հոբսյան՝ «բոլորն ընդդեմ բոլորի» (*bellum omnium contra omnes* scenario)[6] սցենարի զարգացումը: Այդ պայմանագրի միջոցով քաղաքացիները սահմանում են սահմանադրական և իրավական կարգը, որը նաև կանխում է կառավարության կողմից իրեն տրված իշխանության ապօրինի յուրացումը՝ ուզուրպացիան: Կառավարության գործողությունները սահմանափակված են Սահմանադրությամբ, և անհատի/քաղաքացու ինքնիշխանությունն արտահայտվում է նրանով, որ փաստացի նա է Սահմանադրության «աղբյուրը»: Ասվածը ճշգրտորեն արտահայտում է Կանտի հայտնի՝ «Յուրաքանչյուր մարդ համաօրենսդիր է»[7] բանաձևը: Ինքնիշխանության այս «ազատական» հայեցակարգի գիտական նկարագրությունն ազգային պետությունն է: Այս մոտեցման հիմքում «Լոք-Կանտի»՝ ինքնիշխանության հայեցակարգն է՝ պետության «գիշերային պահակի» կանխավարկածի համատեքստում:

Տնտեսական ինքնիշխանությունը գործնականում բացարձակ բնույթ չի կարող կրել: Խնդիրը տնտեսական ինքնիշխանության արդյունավետ մակարդակի գնահատումն ու դրա պահպանմանն ուղղված համապա-

---

[5] Վեստֆալյան հաշտությունը կնքվել է 1648 թ. Երեսնամյա պատերազմից (1618-1648) հետո՝ գերմանական Վեստֆալիայի մարզի Օսնաբրյուկ և Մյունստեր քաղաքներում: Այն համարվում է ժամանակակից աշխարհակարգի հենասյուներից մեկը: Ի թիվս այլ դրույթների՝ Վեստֆալյան հաշտությունն ամրագրեց պետությունների՝ միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը, որն այսօր էլ միջազգային իրավակարգի անկյունաքարային սկզբունքներից մեկն է:

[6] Hobbes: On the Citizen, Cambridge University Press 1998, 5.

[7] https://plato.stanford.edu/entries/kant-social-political/

տասխան քայլերի իրականացումն է: Այսպիսով, տնտեսական ինքնիշխանությունը հարաբերական բնութագիր է, որի օպտիմալ մակարդակը յուրաքանչյուր երկիր պետք է ինքը գնահատի՝ ելնելով սեփական տնտեսության գերակայություններից:

Ինքնիշխանությունը բազմաբաղադրիչ և բազմաշերտ հասկացություն է, և տարբեր հեղինակներ ներկայացնում են դրա ամենատարբեր տեսանկյունները: Սթիվեն Դ. Կրասները, օրինակ, ինքնիշխանությունը դիտարկում է հետևյալ երեք հիմնական հարթություններում[8].

1. Միջազգային իրավական ինքնիշխանություն
2. Վեստֆալյան/Վատելյան ինքնիշխանություն[9]
3. Ներքին ինքնիշխանություն:



Գծ. Ինքնիշխանության երեք հիմնական հարթությունները՝ ըստ Կրասների

Ըստ նրա, ո՛չ տրամաբանորեն, ո՛չ էլ էմպիրիկ հարթությունում ինքնիշխանության այս երեք հայեցակետերը միահյուսված չեն: Պետությունները կարող են ունենալ ինքնիշխանության միայն մեկ հայեցակետը: Օրինակ՝ ձախողված պետություններն ունեն միջազգային իրավական

[8] Krasner 2009, 30-31.

[9] Վեստֆալյան ինքնիշխանության մեկ այլ անվանում է Վատելյան ինքնիշխանությունը: Թեև ավանդաբար այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը վերագրվում է 1648 թ. Վեստֆալյան հաշտությանը, սակայն այդ սկզբունքի իրագործումն ապահովող հայեցակարգը մշակվել է միայն մեկ դար անց՝ շվեյցարացի իրավաբան Էմերիխ դե Վատելի կողմից, որի անվամբ էլ գիտական գրականության մեջ ներկայացվում է համապատասխան հասկացությունը:

ինքնիշխանություն. նրանք կարող են ունենալ Վեստֆալյան/Վատելյան ինքնիշխանություն՝ չունենալով ներքին ինքնիշխանություն:

Պետությունների արտաքին քաղաքականությունը, բացառությամբ փխրուն և ձախողված երկրների, ներքին ինստիտուցիոնալ կառույցների մեծ ազդեցության տակ է, որոնք սահմանում են պաշտոնյաների լիազորությունները և սեփական հասարակությունից ռեսուրսներ կորզելու նրանց կարողությունը: Համաշխարհային քաղաքականության միջին ինստիտուցիոնալիզացիան թույլ է արտահայտված: Որոշիչը ուժն է: Ուժեղներն անում են այն, ինչ ցանկանում են, թույլերը՝ այն, ինչ պարտավոր են, ինչպես գրել է Թուկիդիդեսը հռչակավոր «Մելյան երկխոսության» մեջ[10]:

Ֆորմալ և փաստացի ինքնիշխանություն

Ինքնիշխանության իրավական մեկնաբանության տեսանկյունից արժեքավոր է համաշխարհային իրավաբանության ասպարեզում հեղինակություն վայելող Ջոն Հ. Ջեքսոնի ներդրումը: Նա առաջարկում է ինքնիշխանության դիտարկման հարաբերական մոտեցում՝ կառավարությունների որոշումների կայացման իրավունքների պատշաճ բաշխման համատեքստում[11]: Երբ որոշումների կայացումը տեղի է ունենում ազգային պետությունից ավելի բարձր մակարդակում՝ նպաստելով ինքնիշխան բարիքի ստեղծմանը, ապա, ըստ նրա, այդ դեպքում չկա ինքնիշխանության որևէ խախտում:

Ինքնիշխանությունը որոշումների կայացման համատեքստում է դիտարկում նաև Կարլ Շմիթը՝ իր Դեսիզիոնիզմի դոկտրինի շրջանակում, որի համաձայն՝ ինքնիշխան է նա, ով որոշումներ է կայացնում արտակարգ իրավիճակների ժամանակ[12]: Հետևաբար՝ պետությունը կարող է համարվել ինքնիշխան, եթե բացարձակորեն անկախ է իր տարածքում, իրագործում է զարգացման իր ռազմավարությունը և օգտագործում է բոլոր հասանելի ռեսուրսները:

Գրականության մեջ պետության ինքնիշխանությունը ներկայացվում է նաև ֆորմալ և փաստացի ինքնիշխանությունների դասակարգման տես-

---

[10] Krasner 2009, 36.

[11] "Shared Economic Sovereignty: Beneficial or Not and Who Decides?". ©Institute of International and European Affairs 2013. Written by John W. O'Hagan, Department of Economics, Trinity College Dublin, 12.

[12] https://plato.stanford.edu/entries/schmitt/

քով: Պետությունը ձևականորեն ինքնիշխան է, եթե անկախ է իր տարածքում և իրագործում է իր զարգացման ռազմավարությունը:

Փաստացի ինքնիշխանությունը ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում բնակչության քաղաքական կազմակերպման փորձն է՝ որոշակի տարածքում հաստատելու իր գերակայությունը, անկախությունն ու ինքնաբավությունը:

Իրավական ինքնիշխանությունն այլ պետությունների կողմից տվյալ երկրի ինքնիշխան պետականության ճանաչումն է: Մինչդեռ փաստացի ինքնիշխանությունն արտահայտվում է պետության՝ որոշակի տարածքում վերահսկողություն իրականացնելու կարողությամբ: Զարգացող աշխարհի բազմաթիվ հատվածներում պետությունները գոյատևել են մեծապես իրավական ինքնիշխանության շնորհիվ[13]:

Պետության տնտեսական ինքնիշխանությունը նրա փաստացի ինքնիշխանության էական բաղադրիչի առարկայացումն է: Տնտեսական ինքնիշխանությանը զուգահեռ՝ որոշակի սահմանափակումներով, գրականության մեջ հանդիպում են նաև «ֆինանսական ինքնիշխանություն», «հարկային ինքնիշխանություն», «ռեսուրսային ինքնիշխանություն»[14], «թվային ինքնիշխանություն», «էներգետիկ ինքնիշխանություն», «պարենային ինքնիշխանություն»[15] հասկացությունները:

Ս. Բայդինը տնտեսական ինքնիշխանությունը սահմանում է որպես հետևյալ բաղադրիչների ամբողջություն՝ միջազգային միավորումներին միանալու իրավունք, միջազգային տնտեսական հարաբերություններում իրավահավասարություն, հարգանք այլ երկրների տնտեսական շահերի նկատմամբ, միջազգային տնտեսական խնդիրների լուծմանը մասնակցելու իրավունք[16]:

Պետությունների տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրն առավել արդիական է դարձել XX դ. երկրորդ կեսին: Արդեն 1970-ական թվականներին երկրները փորձեցին տնտեսական ինքնիշխանության

---

[13] Jackson, Rosberg 1982, 12.

[14] Economic sovereignty of a modern state in the context of sustainable development, Mykola Starinskyi, Zhanna Zavalna, Law, Business & Sustainability Herald, 2021, http://lbsherald.org/index.php/journal/article/view/15/10

[15] Komaitis 2021, 11-13. https://doi.org/10.1016/S1361-3723(21)00008-7

[16] Economic sovereignty of a modern state in the context of sustainable development, Mykola Starinskyi, Zhanna Zavalna, Law, Business & Sustainability Herald 2021, http://lbsherald.org/index.php/journal/article/view/15/10

հիմնահարցերը կարգավորել Միավորված ազգերի կազմակերպության մակարդակով: Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1974 թ. ընդունեց Պետությունների տնտեսական իրավունքների և պարտավորությունների խարտիան[17]՝ տնտեսական ինքնիշխանությունը սահմանելով որպես այլ երկրներից անկախ սեփական ռեսուրսները տնօրինելու պետության իրավունք: Այս փաստաթուղթը հաստատեց միջազգային տնտեսական հարաբերություններում տարբեր պետությունների փոխգործակցության հիմնական սկզբունքները: Մասնավորապես, քաղաքական և տնտեսական այդ հարաբերությունները ներառում են բոլոր պետությունների ինքնիշխանությունը, քաղաքական անկախությունը, ինքնիշխան իրավահավասարությունը, փոխադարձ և արդար շահերը, որևէ ազգի բնական ռեսուրսներից զրկելու՝ ուժի կիրառմամբ առաջացած արդար միջադեպերի խաղաղ հանգուցալուծումը:

Գրականության մեջ հանդիպում են նաև տնտեսական ինքնիշխանության գործառնական և արդյունքային սահմանումներ: Ըստ այդմ՝ տնտեսական ինքնիշխանությունը ներկայացվում է որպես պետության ինքնավարություն՝ իրականացնելու հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն, որն արտահայտում է նախընտրելի տնտեսական նպատակներին և արդյունքներին հասնելու նրա կարողությունը: Պիտեր Ջ. Կատզենշտեյնը «Փոքր պետությունները համաշխարհային շուկայում. Ինդուստրիալ քաղաքականությունը Եվրոպայում» իր աշխատության մեջ նշում է[18], որ վերը նկարագրված սահմանման համատեքստում պետությունների ինքնիշխանությունն արտահայտվում է արդյունքների միջոցով: Ասվածի վկայություններից է այն, որ, օրինակ, եվրոպական փոքր պետություններից շատերը ժամանակի տևական հատվածում կարողացել են ապահովել այնպիսի արդյունքներ, որոնք համադրելի են անկախ և զարգացած ժողովրդավարություններով բնութագրվող ԱՄՆ-ի, Գերմանիայի և Ճապոնիայի ցուցանիշների հետ:

Տնտեսական ինքնիշխանությունը բազմագործոն ու բազմամակարդակ, ինտեգրալ հասկացություն է, որը ներառում է ինչպես զուտ տնտեսական, այնպես էլ ներքին ու արտաքին քաղաքական, նաև աշխարհա-

[17] https://legal.un.org/avl/ha/cerds/cerds.html
[18] Mitchel 2000, 5.

քաղաքական բաղադրիչներ: Պետության տնտեսական ինքնիշխանության ընդունելի և արդյունավետ մակարդակի ապահովումը որոշումների կայացման գործընթաց է, որում երկրի իշխանությունները, իսկ ավելի լայն իմաստով՝ վերնախավերը կայացնում են քաղաքական որոշումներ՝ հիմնվելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական իրողությունների վրա: Տնտեսական ինքնիշխանությունը հարաբերական հասկացություն է, աշխարհում չկան բացարձակապես ինքնիշխան պետություններ, ինչպես և երկրներ, որոնք ամբողջությամբ զրկված են ինքնիշխանությունից: Հետևաբար՝ յուրաքանչյուր երկրի խնդիրը տնտեսական ինքնիշխանության այնպիսի ընդունելի մակարդակի ապահովումն է, որը, մի կողմից, չի վտանգի պետության անվտանգությունը, մյուս կողմից, նախադրյալներ կստեղծի կայուն տնտեսական զարգացման համար:

Տնտեսական ինքնիշխանության սպառնալիքները

Տնտեսական ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքները կարելի է բաժանել երկու պայմանական խմբի՝ ներքին և արտաքին: Ներքին մարտահրավերների թվին պետք է դասել ազգային տնտեսության մեջ հարաբերականորեն ազդեցիկ ընկերությունների, այդ թվում՝ վերազգային ընկերությունների կողմից պետության նկատմամբ ազդեցության լծակների կիրառման վտանգը, որի միջոցով վերջինները փորձում են ստանալ իրենց համար առավել նպաստավոր պայմաններ՝ վտանգելով տնտեսական ինքնիշխանությունը:

Արտաքին սպառնալիքները վերաբերում են տվյալ պետության տնտեսական ինքնիշխանության դեմ ուղղված այլ երկրների քայլերին, ինչպես նաև միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպություններին վարած քաղաքականությանը, որը կարող է հանգեցնել պետության տնտեսական ինքնիշխանության նվազեցմանը: Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանությունը, տարբեր չափաբաժիններով, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին սպառնալիքների ներքո է:

Տնտեսական ինքնիշխանությանն ուղղված մարտահրավերները քննարկելիս կարևոր է անդրադառնալ նաև միջազգային տնտեսական միավորումներին Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմնահարցին՝ Եվրասիական տնտեսական միությանը լիակատար անդամակցությանը և միջազգային ինտեգրացիոն այլ միավորումների հետ կապերին, ինչպես, օրինակ, Եվրոպական միության հետ հարաբերություն-

ներին: Ուստի, տնտեսական ինքնիշխանության արդեն իսկ առկա և կանխատեսելի սպառնալիքներին արդյունավետ դիմակայելու համար չափազանց կարևոր են ինչպես այդ հասկացության բոլոր հայեցակետերի նկարագրությունն ու մեկնաբանությունը, այնպես էլ սպառնալիքների բնույթի և ծագման ճշգրիտ գնահատումը: Հատկապես որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունը ներգրավված է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ վերտարածաշրջանային բազմաշերտ ինտեգրացիոն գործընթացներում, որոնք պարունակում են և՛ նշանակալի հնարավորություններ, և՛ լրջագույն սպառնալիքներ:

Տնտեսական ինքնիշխանության խնդիրը դիալեկտիկական կապի մեջ է պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության, քաղաքական հարաբերությունների որակի հետ: Տնտեսական ինքնիշխանությունը, որպես այդպիսին, համընդհանուր համահասարակական բարիք է, որն անհրաժեշտ նախապայման է երկրի կայուն տնտեսական զարգացման համար: Հետևաբար, յուրաքանչյուր երկրի քաղաքական իշխանությունն ունի պետության տնտեսական ինքնիշխանության ընդունելի մակարդակ ապահովելու, այդ թվում՝ սահմանադրական պարտականություններ: Մյուս կողմից, սակայն, տնտեսական ինքնիշխանության խնդիրը սերտորեն առնչվում է մարդու հիմնարար ազատությունների, այդ թվում՝ քաղաքական և տնտեսական ազատությունների հետ: Քաղաքական իշխանության համար միշտ կարող է գայթակղիչ լինել հանուն տնտեսական ինքնիշխանության ապահովման երկրի ներսում տնտեսական ու քաղաքական ազատությունների սահմանափակման հնարավորությունը: Այդ իմաստով՝ տնտեսական ինքնիշխանությունն առնչվում է նաև ազատականության հետ, և դրա ապահովումը կարող է որոշակի սպառնալիքներ առաջացնել ազատականության համար: Կարծում ենք՝ շատ կարևոր է տնտեսական քաղաքականության նկատմամբ այնպիսի սահմանափակումների առկայությունը, որոնք կկանխեն տնտեսական ինքնիշխանության ապահովման նպատակով ազատականությունը, մարդու հիմնարար ազատությունները սահմանափակելու՝ քաղաքական իշխանությունների փորձերը: Տնտեսական ինքնիշխանության և ազատականության հատման սահմանագիծը շատ նուրբ է, և դրանց տարանջատումն ապահովելու համար անհրաժեշտ է, մի կողմից՝ գործող իշխանության քաղաքական կամքը, որն ինքնին սուբյեկտիվ գործոն է, մյուս կողմից՝ երկրում իշխանությանը հակակշռող ու փոխզսպող կենսունակ համակարգերի առկայությունը, որը

հարաբերականորեն օբյեկտիվ և ինստիտուցիոնալ երաշխիք է: Առանց իշխանությունների գործողությունները սահմանափակող ու հակակշռող ինստիտուցիոնալ համակարգերի, այդ թվում՝ *տնտեսական համարժեք* օրենսդրության ու երկրում օրենքի գերակայության, իրավական մշակույթի բավարար մակարդակի տնտեսական ինքնիշխանությունը կարող է վերածվել գործիքի, որի միջոցով որոշումներ կայացնողները կարող են սահմանափակել մարդկանց քաղաքացիական, քաղաքական և տնտեսական իրավունքները: Խնդիրը, լայն իմաստով, հանգում է կառավարությունների դերին և տնտեսական կյանքին նրանց միջամտության աստիճանին: Ինչպես գրել է Միլթոն Ֆրիդմենը, կառավարությունը մարդկանց համար համատեղ նպատակների հասնելու գործիք է, և այն պետք է չափավոր օգտագործվի: «Կառավարությունն անհրաժեշտ է մեր ազատությունը պահպանելու համար, այն գործիք է, որի միջոցով մենք կարող ենք իրացնել մեր ազատությունը: Սակայն իշխանությունը քաղաքական գործիչների ձեռքերում կենտրոնացնելը վտանգավոր է ազատության համար»[19]: Ֆրիդմենի այս ձևակերպումը վերաբերելի է ինչպես, ընդհանուր առմամբ, տնտեսական քաղաքականությանը, այնպես էլ, մասնավորապես, տնտեսական ինքնիշխանության ապահովման ուղղությամբ քաղաքական իշխանությունների գործողություններին: Քանի որ տնտեսական ինքնիշխանության հնարավոր սպառնալիքների համախումբը շատ մեծ է, իսկ դրանցից շատերը ենթակա են կամայական մեկնաբանության, քաղաքական գործիչները կարող են չարաշահել դրանք քաղաքացիների ազատությունը, այդ թվում՝ տնտեսական ազատությունը սահմանափակելու նպատակով: Հետևաբար՝ տնտեսական ինքնիշխանության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված ցանկացած ռազմավարություն կամ հայեցակարգ պետք է հաշվի առնի այս իրողությունը՝ տնտեսական ինքնիշխանության և ազատականության միջև նուրբ սահմանագիծը չհատելու, հանուն տնտեսական ինքնիշխանության՝ իրավունքները չսահմանափակելու նպատակով: Ուրեմն չափազանց կարևոր է իշխանության կենտրոնացման, որոշումների կայացման գործընթացի հաշվետվողականության ու թափանցիկության խնդիրը: Այս հարցում ևս արժեքավոր է Միլթոն Ֆրիդմենի սահմանումը. «Տնտեսական կարգը, որպես քաղաքական ազատության հասնելու միջոց, հատուկ կարևորություն ունի իշխանության

[19] Ֆրիդմեն 2021, 16:

կենտրոնացման կամ ապակենտրոնացման վրա իր ազդեցության շնորհիվ: Տնտեսության այնպիսի կազմակերպումը, որն ուղղակիորեն ապահովում է տնտեսական ազատությունը, այսինքն՝ ազատ մրցակցային կապիտալիզմը, նպաստում է նաև քաղաքական ազատության առաջխաղացմանը, քանի որ տնտեսական իշխանությունը տարանջատվում է քաղաքական իշխանությունից՝ մեկը հակակշիռ դարձնելով մյուսին»[20]: Քաղաքական և տնտեսական ազատությունների արդյունավետ համակցության ապահովումն է, որ կարող է բացառել կամ առնվազն նվազեցնել տնտեսական ինքնիշխանության ապահովման նպատակով հիմնարար ազատությունների սահմանափակման սպառնալիքը: Եվ այդ հարցում, ինչպես կարելի է եզրակացնել Ֆրիդմենի դրույթից, չափազանց կարևոր է քաղաքական իշխանությունների ու տնտեսական միավորների տարանջատումը, որն ինքնին իշխանությանը հակակշռող գործոն է: Հակառակ դեպքում, գործարարության և իշխանության սերտաճման պարագայում, որը բնորոշ է հատկապես անցումային երկրներին, մեծ է վտանգը, որ տնտեսական ինքնիշխանությունը կարող է քաղաքական իշխանությունների համար դառնալ հավելյալ գործիք՝ քաղաքացիական իրավունքների ու ազատությունների, այդ թվում՝ տնտեսական ազատության սահմանափակման համար: Պետությունը, ինչպես վերը նշվել է բազմաթիվ հայեցակետերով, ընդհանուր առմամբ հանդես է գալիս որպես գործակալ, և դա վերաբերում է նաև տնտեսական ինքնիշխանության հետ կապված հարցերին: Այդ տրամաբանությամբ, պետությունը՝ ի դեմս քաղաքական իշխանությունների, տնտեսական ինքնիշխանության ցանկալի մակարդակ պետք է ապահովի ոչ թե ի հաշիվ քաղաքական ու տնտեսական ազատությունների, այսինքն՝ ազատականության, այլ հանուն դրանց իրացման: Այսինքն՝ տնտեսական ինքնիշխանության պահպանման և ամրապնդման պետական քաղաքականության շրջանակում ազատականությունը պետք է համարվի ոչ թե որպես միջոց, այլ նպատակ: Սա չափազանց դժվար իրագործելի, սակայն կենսական խնդիր է, առանց որի լուծման տնտեսական ինքնիշխանությունը կարող է ծառայել քաղաքական իշխանության կենտրոնացմանն ու իշխանությունների հակաազատական գործելաոճի հաստատմանը:

[20] Ֆրիդմեն 2021, 50:

Եզրակացություններ

Տնտեսական ինքնիշխանությունը հարաբերական հասկացություն է. աշխարհում չկան ամբողջությամբ տնտեսապես ինքնիշխան կամ ինքնիշխանությունից բացարձակորեն զուրկ պետություններ: Հետևաբար, խնդիրը ոչ թե տնտեսական ինքնիշխանության այս կամ այն մակարդակի ինքնանպատակ հաստատումն է, այլ դրա արդյունավետ մակարդակի գնահատումն ու դրա պահպանմանն ուղղված համապատասխան պայմանների ապահովումն են: Տնտեսական ինքնիշխանության խնդրի արդիականությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ ժամանակակից աշխարհում պետությունների զգալի մասը, հատկապես խոշոր տերությունները, փորձում են, այսպես կոչված, «փափուկ ուժի» միջոցով հաստատել իրենց քաղաքական և տնտեսական առաջնորդությունը՝ փաստացի սպառնալիք հանդիսանալով այլ՝ քաղաքականապես և տնտեսապես խոցելի երկրների ինքնիշխանության, առաջին հերթին՝ տնտեսական ինքնիշխանության համար: Տնտեսական ինքնիշխանությունը կապված է նաև ազատականության հետ՝ այն առումով, որ տնտեսական ինքնիշխանության ապահովման գործընթացում համապատասխան սահմանափակումների ու հակակշիռների բացակայության դեպքում քաղաքական իշխանությունները կարող են փորձել սահմանափակել քաղաքացիների իրավունքները, այդ թվում՝ տնտեսական ազատությունները: Հետևաբար, մշտապես պետք է ուշադրության կենտրոնում պահել տնտեսական ինքնիշխանության և ազատականության միջև ձգվող նուրբ սահմանագիծը՝ որևէ կամայական հիմնավորմամբ այն չոտնահարելու և ազատականությունը տնտեսական ինքնիշխանությանը չծառայեցնելու նպատակով:

Գրականություն

Ֆրիդմեն Մ. 2021, Կապիտալիզմ և ազատություն, Երևան, «Newmag», 384 էջ:

Vincent A. 1987, Theories of the State, Oxford - New York, B. Blackwell, 248 p.

Smith D., Solinger D., Topik S. (ed.) 2002, States and Sovereignty in the Global Economy, London, "Routledge", 304 p.

Hobbes 1998, On the Citizen, Cambridge, University Press, 306 p.

Engerman S., Metzer J. (ed.) 2004, Land Rights, Ethno-Nationality, and Sovereignty in History, London, Routledge, 416 p.

Stephen D. Krasner, Power, the State, and Sovereignty Essays on International Relations, Published March 10, 2009 by Routledge, 328 p.

Shared Economic Sovereignty: Beneficial or Not and Who Decides?. Institute of International and European Affairs 2013. Written by John W. O'Hagan, Department of Economics, Trinity College Dublin, 20 p.

Robert H. Jackson and Carl G. Rosberg 1982, Why Africa's Weak States Persist: The Empirical and the Juridical in Statehood, Cambridge, University Press, 24 p.

Economic sovereignty of a modern state in the context of sustainable development 2021, Mykola Starinskyi, Zhanna Zavalna, Law, Business & Sustainability Herald, http://lbsherald.org/index.php/journal/article/view/15/10 (ներբեռնման օրը՝ 04.10.2022).

Komaitis K. 2021, Europe's ambition for digital sovereignty must not undermine the Internet's values. Computer Fraud & Security.1, https://doi.org/10.1016/S1361-3723(21)00008-7 (ներբեռնման օրը՝ 09.10.2022).

Michael G. Mitchel 2000, Globalization, Internationalization and Economic Sovereignty in the Small European States, BS, Georgia Institute of Technology, University of Georgia, 310 p.

https://plato.stanford.edu/entries/kant-social-political/ (ներբեռնման օրը՝ 02.09.2021).

https://plato.stanford.edu/entries/schmitt/ (ներբեռնման օրը՝ 22.09.2021).

https://iep.utm.edu/bodin/ (ներբեռնման օրը՝ 14.05.2021).

https://iep.utm.edu/hobmeth/ (ներբեռնման օրը՝ 16.06.2021).

https://legal.un.org/avl/ha/cerds/cerds.html (ներբեռնման օրը՝ 02.09.2021).

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Գևորգյան

Ամփոփում

Տնտեսական ինքնիշխանությունը ցույց է տալիս, թե որքանով երկրի իշխանությունները վճռորոշ ձայն ունեն ազգային տնտեսության ճակատագրին, նրա զարգացման հիմնական առաջնահերթություններին վերաբերող հարցերի հետ կապված որոշումներ կայացնելու գործում: Պետությունն ինքնիշխան է, եթե այն մշակում և իրագործում է իր զարգացման ռազմավարությունը՝ անկախ այլ պետությունների դիրքորոշումներից, միևնույն ժամանակ՝ պահպանելով պետությունների իրավահավասարության և այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները:

Ժամանակակից աշխարհում տնտեսական ինքնիշխանության սպառնալիքները կարող են ունենալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ծագում՝ պայմանավորված, մի կողմից՝ պետության ներքին կառուցակարգերով, այնպես էլ այլ երկրների կողմից, այդ թվում՝ «փափուկ ուժի» գործադրմամբ տնտեսական ինքնիշխանությանը ներկայացվող սպառնալիքներով: Այս առումով կարևոր է նաև ազատականության հիմնախնդիրը, քանի որ համապատասխան հակակշիռների և ինստիտուցիոնալ համակարգերի բացակայության դեպքում քաղաքական իշխանությունները տնտեսական ինքնիշխանության ապահովման գործընթացում կարող են փորձել սահմանափակել քաղաքացիների քաղաքական և տնտեսական իրավունքները:

Բանալի բառեր՝ պետություն, ինքնիշխանություն, տնտեսական քաղաքականություն, գլոբալիզացիա, ինստիտուցիոնալացում, ազատականություն, ազգային տնտեսություն:

СУЩНОСТЬ И ОСНОВНЫЕ АСПЕКТЫ ЭКОНОМИЧЕСКОГО СУВЕРЕНИТЕТА: ЭКОНОМИЧЕСКИЙ СУВЕРЕНИТЕТ И ЛИБЕРАЛИЗМ

Гарник Геворгян

Резюме

Экономический суверенитет – важнейший компонент суверенитета государства. Он показывает, насколько власти страны имеют решающий голос в принятии решений по вопросам, касающимся судьбы национальной экономики. Экономический суверенитет на практике не может быть абсолютным. Задача состоит в оценке эффективного уровня экономического суверенитета и обеспечении соответствующих условий для его сохранения. Экономический суверенитет – интегральное понятие, которое включает в себя как чисто экономические, так и внутренне- и внешнеполитические, а также геополитические компоненты. Обеспечение допустимого и эффективного уровня экономического суверенитета государства – это процесс принятия решений, благодаря которым власти страны, а в более широком смысле – элиты, принимают политические решения, основываясь как на политических, так и на экономических реалиях.

В рамках обсуждения темы экономического суверенитета важна также проблема либерализма, так как в случае отсутствия соответствующих противовесов и институциональных систем политические власти в процес-

се обеспечения экономического суверенитета могут пытаться ограничить политические и экономические права граждан.

Ключевые слова – государство, суверенитет, экономическая политика, глобализация, институционализм, либерализм, национальная экономика.

THE ESSENCE AND THE MAIN ASPECTS OF ECONOMIC SOVEREIGNTY: ECONOMIC SOVEREIGNTY AND LIBERALISM

Garnik Gevorgyan

Abstract

Economic sovereignty is the key element of a state's overall sovereignty. It shows to what extent the country's authorities have an emphasized voice in decisions on the national economy and its key development priorities. Economic sovereignty cannot have absolute measurements. The issue is to evaluate the effective level of economic sovereignty and to provide appropriate conditions for its maintenance. Economic sovereignty is an integral concept, which includes economic, as well as domestic and foreign policy, including geopolitical components. Providing an effective level of economic sovereignty is a decision-making process in which the country's authorities, and in a broader sense, the elites, make political decisions based on both political and economic realities. In the discussion of the theme of economic sovereignty it is important to emphasize the issue of liberalism, as in the absence of appropriate counterbalances and institutional systems, the political authorities may try to restrict the political and economic rights of citizens in the process of ensuring economic sovereignty.

Key words – state, sovereignty, economic policy, globalization, institutionalization, liberalism, national economy.